ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ՁՐԱՇԵՆԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

23.10.2014 թ.

Հեռ. (255) 6-03-23

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Ա. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻՆ

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ձրաշեն համայնքի ավագանու 13.10.2014թ թիվ 20 և 21 որոշումները:
Առդիր 2 թերթ:

Համայնքի ղեկավար՝ Վ. ՈՒՌՈՒՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՋՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ջրաշեն համայնք, 8 Փ. 32, հեռ. (255)6-03-23

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 հոկտեմբերի 2014 թվականի N 20

«ՋՐԱՇԵՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ԲՈՒԺ ԱՄԲՈՒԼԱՏՈՐԻԱ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ «ՋՐԱՇԵՆԻ ԲՈՒԺ ԱՄԲՈՒԼԱՏՈՐԻԱ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության,«Քաղաքացիական օրենսգրքի» 63-րդ հոդվածի 1-ին մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 14-րդ մասի և «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 5-րդ մասի « Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի առաջին մասի առաջին կետի « բ» ենթակետի Ջրաշեն համայնքի ավագանին որոշում է.

1. «ՋՐԱՇԵՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ԱՄԲՈՒԼԱՏՈՐԻԱ» փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետ՝ ՓԲԸ) վերակազմավորման ձևով վերակազմակերպել«ՋՐԱՇԵՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԱՄԲՈՒԼԱՏՈՐԻԱ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ ՀՈԱԿ):
2. Համայնքի ղեկավարին՝

ա) մեկամսյա ժամկետում կազմել և հաստատել ՓԲԸ վերակազմավորման կարգը և պայմանները, տեղաբաշխված բաժնետոմսերի և այլ արժեթղթերի փոխարկման կարգը.

բ) հաստատել ՓԲԸ գույքի և գույքային իրավունքների՝ ՀՈԱԿ – ին փոխանցման ակտը, որում առկա են վերակազմակերպվող ընկերության գույքի և պարտատերերին ու պարտապաններին վերաբերող բոլոր պարտավորությունների իրավահաջորդության մասին դրույթներ.

գ) կայացնել ՀՈԱԿ – ի ստեղծման մասին որոշում, կազմել կազմակերպության կանոնադրության նախագիծը և ներկայացնել ավագանու հաստատմանը.

դ) կազմել համայնքային կազմակերպությանը սեփականության իրավունքով հանձնվող և ամրացվող՝ համայնքին պատկանող գույքի կազմը և ներկայացնել ավագանու հաստատմանը:

3. Կազմակերպության կառավարման, ինչպես նաև՝ «Պետական ոչ՝ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ կետի «է» ենթակետով ու 14-րդ հոդվածով նախատեսված լիազորությունները վերապահել Ջրաշեն համայնքի ղեկավարին:

4. ՓԲԸ տնօրենին, ընկերության բոլոր պարտատերերին օրենքով սահմանված կարգով ծանուցել ընկերության վերակազմավորման մասին:

5. Սույն որոշման երկրորդ կետի «դ» ենթակետում ընդգրկված հարցով որոշում կայացնելու լիազորությունը փոխանցել համայնքի ղեկավարի :
6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման հաջորդ օրվանից:

Կողմ (6) Դեմ (0) Ձեռնպահ (0)

ՀՈՒՍԻԿ ԹՈՎՄԱՍՅԱՆ
ԶԱՎԵՆ ՏՈՆԻԿՅԱՆ
ԿԱՐԱՊԵՏ ՈՒՌՈՒՍՅԱՆ
ՀՐԱՉՅԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
ՄԱՐՏԻՆ ԴԱՎԹՅԱՆ
ՀԱՅԿ ԽԱԼԱԹՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՈՒՌՈՒՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՋՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ջրաշեն համայնք, 8 Փ. 32, Հեռ. (255)6-03-23

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 հոկտեմբերի 2014 թվականի N 21

ՋՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2014Թ ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ 3-ՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ՀԱՂՈՐԴՄԱՆ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 69 հոդվածի Ջրաշեն համայնքի տարեկան բյուջեի կատարման 3-րդ եռամսյակի հաղորդումն ընդունել ի գիտություն.

1. Ընդամենը եկամուտներ- 46210.3 հազար դրամ,
2. Ընդամենը ծախսեր –24661.1 հազար դրամ,
3. Եկամուտների գերազանցումը ծախսերին-21549.2 հազար դրամ,

Կողմ (6) Դեմ (0) Ձեռնպահ (0)

ՀՈՒՍԻԿ ԹՈՎՄԱՍՅԱՆ
ԶԱՎԵՆ ՏՈՆԻԿՅԱՆ
ԿԱՐԱՊԵՏ ՈՒՌՈՒՍՅԱՆ
ՀՐԱՉՅԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
ՄԱՐՏԻՆ ԴԱՎԹՅԱՆ
ՀԱՅԿ ԽԱԼԱԹՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՈՒՌՈՒՍՅԱՆ